Համաձայն
Վարչության 20.12.2023թ. որոշման
Ուժի մեջ է մտնում 27.12.2023 թվականից

Ժամկետային ավանդ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար «AMIO-ԿՈՐՊՈՐԱՏԻՎ+»

Արժույթ	ՀՀ դրամ	
Ավանդի ներդրման ժամկետ (օրերով)	Տարեկան առավելագույն տոկոսադրույք՝ ըստ տոկոսների վճարման հաճախականության	
	Ամսական	Ժամկետի վերջում
31-90 օր	5.7%	5.95%
91-180 օր	6.7%	6.95%
181-365 օր	8.20%	8.70%
366-550 օր	9.00%	9.20%

Ավանդի ներգրավման ընդհանուր պայմաններ

- **Ավանդի ներդրման նվազագույն գումար՝** 1,000,000 ՀՀ դրամ:
- **Ավանդի ներդրման համար սահմանվող առավելագույն գումար՝** 500,000,000 ՀՀ դրամ: Նշված գումարից ավել ներդրվող ավանդների համար սահմանվում են անհատական պայմաններ:
- **Ավանդի համալրում՝** թույլատրվում է ավանդի ներդրման սկզբնական գումարի 50%-ի չափով մինչև ավանդի պայմանագրի գործողության վերջին 60 օրը:
- **Տոկոսների հաշվարկ՝** Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում՝ Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ:
- Մեկ բիզնես քարտի անվճար տրամադրում.
- Ավանդատուներին, ըստ ցանկության, տրամադրվում է վարկային միջոցներ ստանալու հնարավորություն.
- Անհատական փոքր պահատեղից անվճար օգտվելու հնարավորություն մինչև ավանդի գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ավել, քան 90 օր.
- **Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդային գումարը կամ դրա մի մասը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում Բանկը վճարում է տոկոսներ՝ բանկային հաշվի մնացորդի դիմաց վճարվող Բանկի սակագներով նախատեսված տարեկան տոկոսի չափով ու կարգով, եթե տվյալ ավանդատեսակի համար այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Եթե Բանկը Ավանդատուին վճարել է Բանկային ավանդի պայմանագրով նախատեսված տոկոսները, ապա Բանկը Ավանդատուի ավանդը ժամկետից շուտ վերադարձնելու պահանջը ստանալուց հետո վերահաշվարկ է կատարում և ավանդի գումարից պահում է Ավանդատուին վճարված տոկոսագումարները, այնուհետև՝ վերադարձնում վերահաշվարկման արդյունքում մնացած գումարը:**